ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Դպրոց՝ «Արմավիրի մարզի Նորապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Առարկա՝ Հայոց լեզու և գրականություն

Հետազոտության թեման՝ Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում

Մենթոր ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

Հետազոտող ուսուցիչ՝ Ն. Մարտիրոսյան

ԱՐՄԱՎԻՐ-2023թ.

Բովանդակություն

Նախաբան 3-4

Գրականության ակնարկ…….. ...5-14

Կատարված հետազոտություններ և հետազոտությունների արդյունքներ ……....15-16

Ամփոփում 17-18

Գրականության ցանկ 19

Հավելված ……20-21

Նախաբան

<<Մարդը ենթարկվում է բռնության, երբ նա բազմիցս և ժամանակի ընթացքում ենթարկվում է մեկ կամ մի քանի այլ անձանց կողմից բացասական գործողությունների, և դժվարանում է պաշտպանել իրեն>> (Դեն Օլվեուս)[7]: Նա իր գրքում տալիս է ահաբեկչության ընդհանուր ընդունված սահմանումը՝ ահաբեկում դպրոցում. ինչ գիտենք և ինչ կարող ենք անել:

Բուլինգը ագրեսիվ վարքագիծ է, որը ներառում է անցանկալի, բացասական գործողություններ: Այն ներառում է ուժերի անհավասարակշռություն:

Բուլինգը ամենուր է, դրա համար էլ խնդիրը կարևորել եմ և ուզում եմ բարձրաձայնել, քանի որ հատկապես դպրոցում հանդիպող բուլինգը համաշխարհային խնդիր է , որը կարող է ունենալ վատ հետևանքներ դպրոցական միջավայրի համար և կարող է խախտել այն օրենքը, որով յուրաքանչյուր երեխա իրավունք ունի ապահով կրթություն ստանալու:

Ուսումնական գործընթացը չի կարող լինել լիարժեք, եթե ապահովված չէ դասարանի ամբողջական ընդգրկվածություն: Կան երեխաներ, ովքեր ամփոփվում են իրենց մեջ, և հաճախ ուսուցիչը չի կարողանում բացահայտել ամբողջական կարողությունները: Դա կարող է ունենալ տարբեր պատճառներ, սակայն ամենատարածված հնարավոր պատճառը անվստահությունն է: Երբ երեխայի վրա կա արտաքին ճնշում (դա կարող է լինել դասընկերների, ծնողների կամ ուսուցիչների կողմից), նա աշխատում է դառնալ աննկատ, որպեսզի մի նոր հարված չստանա: Կամ երեխան ունենա ֆիզիկական արատ, և դրա հիման վրա անձի կարողությունների հանդեպ թերահավատություն դրսևորվի:

Միջին դպրոցից սկսած տղաների մոտ պակասում է հետաքրքրությունը ուսման նկատմամբ, քանի որ վախենում են, որ իրենց կծաղրեն, իսկ մի մասն էլ տարվում է համակարգչային խաղերով, սոցցանցերի շփումներով, որն էլ ունենում է բացասական հետևանքներ: Նման դեպքերում մենք կորցնում ենք խելացի, բանիմաց և պաշտվանված քաղաքացիներ կրթելու մեր հնարավորությունը: Կեղծ հասցեներից ստանում են ահաբեկող, նվաստացնող, խաբեության մղող նամակներ: Խաղերի միջոցով կորզում են գումարներ, ընդգրկում են վատ խմբավորումների մեջ:

Հետազոտության նպատակն է բարձրացնել սովորողների և մանկավարժների տեղեկացվածության մակարդակը բուլինգի բացահայտման և կանխարգելման նպատակով, կանխել բուլինգի դրսևորումները դպրոցում:

Հետազոտության հարցերն են՝ ուսումնասիրել բուլինգի դրսևորման ձևերը դպրոցում, առաջարկել բուլինգի բացահայտմանն ու կանխարգելմանն ուղղված մեթոդների կիրառում:

Հետազոտության վարկած՝ եթե կանխարգելիչ միջոցներ ձեռնարկենք, ապա բուլինգը դպրոցում չի կիրառվի, և կունենանք առողջ փոխհարաբերություններ:

Բուլինգի երևույթը քննարկել են մի շարք հայտնի հոգեբաններ, հետազոտողներ, կրթական հաստատություններ: Այս առումով հատկապես ակտիվ մասնակցություն են ունեցել Սկանդինավյան մի շարք երկրներ, Մեծ Բրիտանիան, Ճապոնիան, նաև ոչ այնքան զարգացած երկրներ: Այս հարցը արդիական է այնտեղ, որտեղ կա դպրոցական միջավայր: «Չորս աչքով ո՞նց լավ չես տեսնում»՝ տգեղ արտահայտություններից միայն մեկն է, որը մենք տեսնում ենք մեր դպրոցներում: Այս երևույթը մարդկային հասարակության մեջ կա վաղնջական ժամանակներից, ծաղրվել են թույլերը, տկարները, հետո՝ այլակրոնները և այդպես շարունակ: Շատ հոգեբաններ և մտածողներ նշում են, որ մարդու թույլ կողմը կամ այլակարծությունը ծաղրելը բնորոշ է չինքնահաստատված, թույլ մարդկանց, որոնց առաջ գնալու ռազմավարությունը ոչ թե այլոց գերազանցելն է, այլ նվաստացնելը, որով իրենք առանց աճելու դառնում են մնացածից ավելի «բարձր»: Սակայն ավելի կարևոր է հասկանալ, թե ինչպես պայքարել բուլինգի դեմ դպրոցում՝ երեխաների շրջանում: Բուլինգը Հայաստանում ընդհանրապես անտեսված խնդիր է, հատկապես դպրոցներում: Չկա վիճակագրություն այն մասին, թե տարեկան քանի աշակերտ է բռնության ենթարկվում դպրոցներում հասակակիցների կողմից: Չկա վիճակագրություն, որովհետև բուլինգի չափման գործիքներ չկան: Հայաստանում չկա բուլինգը հասցեագրող ո'չ իրավական դաշտ, ո'չ ռազմավարություն, և ոչ էլ ճշգրիտ պատկերացումներ: Ավելին, իրավիճակն առավել խնդրահարույց են դարձնում հայկական մտածելակերպը, անհանդուրժողականությունը ամեն ինչի հանդեպ, ինչ դուրս է սահմանված «ավանդական կանոններից», իրազեկվածության, իրավագիտակցության ցածր մակարդակը, հասարակությունում փոխադարձ հարգանքի բացակայությունը և այլն:

Ուսումնասիրել եմ բուլինգի դեմ պայքարին ուղղված տարբեր կազմակերպությունների դիտարկումները դպրոցում հանդիպած դեպքերի հիման վրա, մշակել եմ աշխատանքային ռազմավարություն, դիտարկել աշակերտների ուժեղ և թույլ կողմերը և փնտրել ճիշտ ուղիներ:

Գրականության ակնարկ

1. **Բուլինգի սահմանումը**

Բուլինգ կամ հալածանք (անգլ. Bullying) որևէ անձի կողմից ֆիզիկական կամ հոգեբանական ուժի գործադրումն է այլ անձի նկատմամբ, որը կրում է շարունակական բնույթ: «Բուլինգ» տերմինն առաջին անգամ գործածվել է 1530 թվականից՝ սկզբնապես նշանակելով «սիրելի», ապա տարբեր ձևափոխություններից հետո իր ներկայիս իմաստը ստացել է 1710 թվականից:

Բուլինգը հարաբերություններում իշխանության շարունակական և կանխամտածված չարաշահում է, կրկնվող, ֆիզիկական և սոցիալական վարքագծի միջոցով, որը մտադիր է ֆիզիկական, սոցիալական կամ հոգեբանական վնաս պատճառել: (Բուլինգի դեմ պայքարի ազգային կենտրոն)

2. **Բուլինգի տեսակները և դրսևորումները**

Բուլինգի ենթարկվող անձը համարվում է բուլինգի զոհ, իսկ բուլինգի ենթարկող անձին համարում են բուլեր: Բուլինգը բաժանվում է մի քանի տարատեսակների.

ա. կիբեր բուլինգ, որն իրականացվում է համակարգչի միջոցով՝ օգտագործելով համակարգիչը որպես վնասելու միջոց

բ. ֆիզիկական բուլինգ՝ հարվածելու, ծեծի միջոցով

գ. վերբալ կամ բառացի բուլինգ՝ պիտակավորման, ծաղրական անունների միջոցով

դ.հարաբերական բուլինգ, որի միջոցով փորձում են մեկուսացնել մարդուն իր շրջապատից և կանխամտածված բացառում նրան հասարակությունից: (BRIM)

ե. սեռական բուլինգ, որը դպրոցական միջավայրում վարքագծի այն տեսակն է, որտեղ սեռական ահաբեկում, ծաղրանքներ և սպառնալիքներ կարող են տեղի ունենալ կամ սեռական բնույթի տեքստեր, հաղորդագրություններ կամ ֆիլմեր ուղարկել և այլն: ABA

https://antibullyingsoftware.com/what-is-the -definition-ofphysical-bullying/

3. Բուլինգի ընդհանուր բնութագիրը

Բուլինգը ըստ ձևերի կարելի է բաժանել 2 խմբի՝ ուղղակի և անուղղակի: Ուղղակի բուլինգի դեպքում դրսևորվում են հետևյալ վարքային ձևերը՝հարվածել, ծեծել, գողանալ, ծաղրել, անընդհատ բարկացնել, վիրավորել, սպառնալ: Իսկ անուղղակի բուլինգի դեպքում բուլինգի զոհին կանխամտածված մեկուսացնում են իր միջավայրից, ընկերներից:

Հետազոտողները փաստում են, որ ուղղակի բուլինգի ձևը հիմնականում բնորոշ է տղաներին, իսկ անուղղակի ձևը՝ աղջիկներին: Ուղղակի բուլինգը ավելի հաճախ հանդիպում է կրտսեր դպրոցի, ինչպես նաև միջին դպրոցի երեխաների մոտ, իսկ անուղղակի բուլինգը՝ արդեն միջին դպրոցում: Չնայած այս դասակարգմանը՝ և' ուղղակի, և' անուղղակի բուլինգը հանգեցնում են նույն արդյունքին՝ մարդու ֆիզիկական և հոգեբանական ճնշվածության:

Երեխաների դեպքում, հատկապես դեռահասության շրջանում (միջին դեռահասության տարիք) դպրոցական բուլինգը առավել վտանգավոր է, որովհետև այդ տարիքում մարդը փնտրում է իր կյանքի իմաստները, իր ճանապարհը, ինքն իրեն: Ու հանկարծ այդ ճանապարհին հանդիպում է բռնության, որը սովորաբար հենց այն առանձնահատկության հիմքով է լինում, որը կարող է դառնալ նրա վստահության՝ որպես անձ հաստատվելու կարևոր անկյունաքարը:

Բուլինգի հիմքը դնում են ծնողները, որքան էլ դա տարօրինակ հնչի: Բնական է, երբ ծնողն իր երեխային մեծարում է, նրան ասում, որ ամենալավն է, ունի շատ ավելի արժանիքներ, քան այլ երեխաները: Եվ այս թվացյալ սիրո դրսևորումը սերմանում է երեխայի մեջ մեծամտություն և փակում նրա աչքերը, որ չտեսնի իրականությունը և չցանկանա հավատալ, որ որևէ մեկն ինչ-որ բանում նրանից առաջ է անցել: Ցավոք, սա բարդ ուղղելի գործընթաց է, սակայն ավելի սարսափելի են այս «մոլախոտի» պատճառով կատարվող գործողությունները, հատկապես բուլինգը: Դիտարկենք սովորական դեպք, որտեղ գլխավոր հերոսը տղան է: Փոքր տարիքում ծնողական մեծարանքի արժանացած երեխան ծաղրում է աշխատասեր աշակերտներին, ովքեր ստանում են բարձր գնահատական: Պատանեկան տարիքում այդ նույն երեխան կնախանձի այլոց, ովքեր շատ ավելի հայտնի են աղջիկների շրջանում կամ ավելի խելացի են: Այս երկու դեպքում էլ նա ծաղրում է նրանց, փորձում զգալ իրեն ավելի բարձր: Ինչպես երևում է, ծնողների՝ իրենց երեխայով հպարտանալը կարող է բերել այդ երեխայի մեջ որակի զգացողության կորստի,

երեխան կդադարի հասկանալ և համեմատել իր և մյուսների աշխատանքի որակը և միայն կհենվի իր ենթագիտակցության վրա, որում սերմանված է, որ նա ամենալավն է ամեն ինչում: Այս պայքարի ճանապարհը բավականին բարդ է և լի է խոչընդոտներով: Նախ ծնողն ունի ազատ խոսքի իրավունք, և ոչ ոք չի կարող արգելել նրան գովաբանել իր զավակին, և ապա ծնողը միշտ ցանկանում է ինքն իրեն համոզել, որ իր երեխան ամենալավն է, ինչը բնական է: Այս ամենի դեմ պայքարի միակ ձևը ծնողի հետ խորհրդակցելն է, խնդրելը, որ նա հնարավորինս քիչ անտեղի գովասանքի արժանացնի իր զավակին, գովելու հետ մեկտեղ ցույց տա, որ լավագույնը լինելու համար պետք է շատ աշխատել, այլապես իր երեխան կլինի ուրիշներից ավելի վատը:

4.Յունիսեֆի ներգրավվածությունը բուլինգի կանխարգելմանն ուղղված գործում

Դիտարկելով մի շարք աղբյուրներ՝ տեսնում ենք, որ բուլինգը ամենուր է՝ տանը, դպրոցում, ինչքան էլ որ զարմանալի է, աշխատավայրում, բակում:

Բուլինգի զոհ դարձածները հիմնականում լինում են ոչ ապահովված ընտանիքներից, երբեմն նաև ծնողազուրկ , քանի որ նման մարդկանց վիրավորելը շատ ավելի դյուրին է:Նրանք հիմնականում ներփակված են լինում իրենց մեջ, չեն կիսվում ոչ ոքի հետ և կարծում են, որ դա ամենաճիշտ լուծումն է: Նրանք ձեռք են բերում վախ դպրոցի հանդեպ, համարում են դպրոցը տխուր, ոչ ապահով վայր:Բուլինգի զոհ դառնալը շատ առումներով կապված է երեխաների դաստիարակության, ընտանեկան մթնոլորտի հետ, որը նույնպես անդրադառնում է երեխայի ինքնագնահատականի ձևավորման վրա:

«Կրթությունը խաղաղ հասարակություն կառուցելու հիմքն է, մինչդեռ աշխարհում միլիոնավոր երեխաների համար դպրոցն ինքնին անվտանգ վայր չէ»,- ասում է ՅՈՒՆԻՍԵՖ-ի գործադիր տնօրեն Հենրիետա Ֆորը: «Երեխաներն ամեն օր բազմաթիվ վտանգների են ենթարկվում՝ ծեծկռտուքներ, ճնշումներ, բուլինգ կյանքում և առցանց, բռնի դաստիարակություն, սեռական ոտնձգություն, զինված կոնֆլիկտներ: Կարճաժամկետ տեսանկյունից սա ազդում է նրանց կրթության վրա, իսկ երկարաժամկետ տեսանկյունից՝ հանգեցնում դեպրեսիայի և նույնիսկ ինքնասպանության: Բռնությունն անմոռանալի դաս է, դաս, որ ոչ մի երեխա չպետք է սովորի»[1]:

Աշխարհի տարբեր երկրներում ՅՈՒՆԻՍԵՖ-ը կազմակերպում է «Վերջ բռնությանը» թեմայով քննարկումներ երիտասարդների ու դեռահասների հետ: Այս միջոցառումների շարքը հարթակ է, որտեղ նրանք կարող են պատմել բռնության ենթարկվելու իրենց պատմությունները, խոսել՝ ինչ է պետք իրենց դպրոցում անվտանգ զգալու համար և խնդրի լուծման իրենց առաջարկները ներկայացնել երկրների առաջնորդներին: Դպրոցներում բռնությանը վերջ դնելու համար ՅՈՒՆԻՍԵՖ-ը կոչ է անում հրատապ գործողություններ իրականացնել հետևյալ ոլորտներում.

-ապահովել համապատասխան օրենսդրության առկայությունը և պահպանումը

- ապահովել դպրոցներում բռնության կանխարգելման և խնդրի համապատասխան լուծման մեթոդների առկայությունը

-աջակցել բռնության մասին բարձրաձայնող աշակերտներին և դասասենյակներում ու համայնքներում փոխել բռնության մշակույթը
- դպրոցում անվտանգություն ապահովող հաջողված լուծումներին ուղղված ներդրումներն ավելի արդյունավետ ու թիրախավորված դարձնել
- հավաքագրել դպրոցներում կատարվող բռնության մասին տվյալները ավելի արդյունավետ ու տեսակավորված կերպով:

ՅՈՒՆԻՍԵՖ-ը քաջալերում է ողջ աշխարհի երիտասարդներին բարձրաձայնել դպրոցներում և դրանց շուրջ կատարվող բռնության մասին բռնությանը վերջ դնելու նպատակով: Դպրոցը շատերի մոտ ընկալվում է որպես պաշտպանված միջավայր, սակայն, մյուս կողմից էլ պետք է հասկանալ, որ այդ միջավայրում հայտնվում են երեխաներ, որոնք ինքնահաստատման խնդիր ունեն, հետևաբար՝ վարքի տարբեր ձևեր կարող են դրսևորել» [4],- ասում է հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի տնօրեն Արաքսյա Սվաջյանը:

Ըստ Արաքսյա Սվաջյանի՝ դպրոցը պետք է ձգտի դառնալ անվտանգ միջավայր յուրաքանչյուր սովորողի համար՝ նվազագույնի հասցնելով բուլինգի դեպքերը: Մինչդեռ երբեմն ուսուցիչներն ուղղակի կամ անուղղակի կերպով դառնում են բուլինգի մասնակից կամ հրահրող: Ուսուցչի կողմից արված անզգույշ արտահայտությունը կարող է թիրախավորել մի աշակերտի, իսկ իրենց գերակայությունը հաստատելու ձգտում դրսևորող մյուս երեխաների համար դա բուլինգի չբարձրաձայնված թույլտվություն է դառնում:

Մասնագետն ասում է, որ բուլինգից զերծ դպրոցական միջավայր ունենալու համար անհրաժեշտ է աշխատել և' ուսուցիչների, և' ծնողների հետ. ոչ մեկը նրանցից իրավունք չունի անտարբեր լինել այս երևույթի նկատմամբ:

«Շատ կարևոր է, որ ծնողներն իմանան, որ դպրոցում ուրիշներին հալածող երեխաների շրջանում շուրջ 60% -ով ավելանում է հետագայում քրեական հանցագործությունների դիմելու հավանականությունը, որովհետև բռնությունը սկսում է ընկալվել որպես միջանձնային մակարդակում հարցեր լուծելու միակ տարբերակ:

Եթե դպրոցում ծնողները կարող են աչք փակել նրա վրա, որ իրենց երեխան բռնարար է՝ համարելով, որ այդ կերպ նա իր հարցերը ինքնուրույն լուծելու հմտություն է ձեռք բերում ողջ կյանքի համար, ապա հետագայում այդ վարքը բոլորովին այլ դրսևորումների կարող է բերել: Բուլինգի տարածմանը մեծապես նպաստում է նաև այն հանգամանքը, որ այս գործընթացում ներգրավում են ոչ միայն

զոհն ու բռնարարը, այլև լուռ հետևողների մի ստվար զանգված»[5] - Արաքսյա Սվաջյան: Ողջ աշխարհում նոյեմբերի 19-ին 20-ը նշվում են որպես երեխաներին բռնություններից պաշտպանելու և նրանց իրավունքների իրացումն ապահովելու օրեր: Երեխաներին բռնություններից զերծ պահելը պետության և հասարակական ինստիտուտների կարևորագույն խնդիրներից է:
Թեպետ Հայաստանում այս թեմայով վերջին լայնածավալ հետազոտությունն արվել է 2016թ.-ին, համաձայն որի մեր երկրում 1-14 տարեկան տասը երեխայից յոթը ենթարկվում է ֆիզիկական կամ հոգեբանական բռնության, այսօր էլ խնդիրն իր արդիականությունը չի կորցրել: Մտահոգիչ է նաև երեխաների շրջանում «բուլինգ»-ի (հալածանք) ցուցանիշները դեռահասների շրջանում: Հայաստանի 6 մարզերի մի շարք համայնքներում Վորլդ Վիժնի կողմից 2019 թ.-ին իրականացված հարցումների արդյունքում պարզվել է, որ 12-18 տարեկան երեխաների 8.7%-ը վերջին մեկ տարվա ընթացքում բուլինգի է ենթարկվել, ընդ որում դա ավելի հաճախ եղել է հենց դպրոցում: Խոցելի ընտանիքներում ապրող երեխաների շրջանում բուլինգն ավելի տարածված է, նրանց 12,5%-ն է դառնում բուլինգի զոհ:
Տիկին Աբելյանը նշում է, որ երեխայի հանդեպ կիրառվող բռնությունը զգալի ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի վրա. «Բռնության հետևանքների վերաբերյալ բազմաթիվ հետազոտություններ կան. որքան փոքր է երեխան, այնքան ծանր են բռնության հետևանքները: Վաղ տարիքի երեխայի մոտ կարող է խաթարվել հուզական աշխարհի, խոսքի զարգացումը, քնի, սնուցման խանգարումներ կարող են լինել և այլն: Բռնության ենթարկված երեխաները հասուն տարիքում ավելի հաճախ են ալկոհոլի և թմրանյութի նկատմամբ հակվածություն ունենում, նրանց մոտ հաճախ է դեպրեսիա ախտորոշվում: Բռնության ենթարկված երեխաները հաճախ իրենք են բռնարարներ դառնում, իսկ երբեմն էլ շարունակաբար զոհի կարգավիճակում են հայտնվում»,- ասում է նա [3]:
Բուլինգի դրսևորումներ հանդիպում ենք նաև գրական ստեղծագործություններում: Նման իրավիճակներ տեսնում ենք Նար-Դոսի «Մեր թաղը» (1889-1890թթ.) նովելաշարում, որտեղ յուրաքանչյուր նովել մի դրամա է: Խավարի ու թշվառության միջավայրում մեծ չարիք են սնահավատությունն ու տգիտությունը («Սաքուլն ուխտ գնաց», «Ինչպես բժշկեցին»), վայրագությունն ու կոպտությունը («Թե ինչ եղավ հետո, երբ շաքարամանից երկու կտոր շաքար պակասեց», «Հոպոպ»), հարբեցողությունն ու բարոյական անկումը («Հոգուն վրա հասավ», «Սև փողերի տոկոսը»)[2]:

<<Հոգուն վրա հասավ>> պատմվածքում նախշքար Դավիթը գործազրկության պատճառով հայտնվել է ողորմելի ու թշվառ վիճակում, դուրս մղվել կյանքի

բնականոն ընթացքից: Դառնություններն ու վշտերը նա խեղդում է գինու գավաթի մեջ, ողջ կատաղությունն ու դառնությունը թափում կնոջ և երեխաների վրա: Խմելու անհագուրդ ծարավից տոչորվում է Դավիթը, սակայն նրա գրպանը դատարկ է, իսկ գինեվաճառն էլ նրան խմիչք չի տալիս: Ցնցող է պատմվածքի վերջաբանը. Դավիթը կատաղորեն խլում է ութ տարեկան որդու (նա պղնձագործի աշակերտ էր) առաջին վաստակը՝ մեկ աբասին, և դուրս նետվում: Տանը մնում են հեկեկացող Ակոբը, ծանր հարվածից, ցավից աչքերը փակած կինը, քաղցած, կիսամերկ աղջիկները և ցուրտ քամին:

Նմանատիպ խնդիր է շոշափվում Թումանայնի <<Գիքորը>> պատմվածքում, որի առանցքում դնելով օտար ու անմարդկային միջավայրում հայտնված միամիտ երեխայի ճակատագրի խնդիրը՝ Թումանյանը շոշափում է գյուղի սոցիալական ծանր վիճակի, քաղաքի ապականված միջավայրի կեղծ հարաբերությունների, մարդկային կարեկցանքի, խղճի, բարոյականության և այլ խնդիրներ:

Գյուղացի Համբոն որդուն՝ տասներկուամյա Գիքորին, մարդ դարձնելու և ընտանիքի հոգսը թեթևացնելու նպատակով տանում է քաղաք և ծառայության թողնում վաճառական բազազ Արտեմի մոտ: Վերջինս Գիքորին վերցնում է հինգ տարի անվճար աշխատելու պայմանով: Պարզամիտ ու խեղճ երեխան բազմաթիվ զրկանքներ է կրում, ծեծվում, ստորացվում, ի վերջո հիվանդանում է ու մահանում: Թումանյանը բացահայտում է մաքուր ու պարզ երեխայի կործանումը դաժան ու անիրավ աշխարհում:

Գրականության դասին նմանատիպ դեպքեր, իրադարձություններ, կերպարներ վերլուծելիս փորձում ենք աշակերտներին իրազեկել, տեղեկացնել հասարակության չարիք համարվող երևույթներին, ինչը, սակայն, բավարար հիմք չի հանդիսանում խնդրի խորքային պատճառները գտնել, վեր հանել և հնարավոր լուծումներ առաջարկել: Կարևոր է կրթության բաղադրիչի կարևորության ու հավասարության իրավունքի տարածումը, չպետք է որևէ մեկը դուրս մնա կրթությունից ու կարևոր է, որ դպրոցը դնի այդ անվտանգության և հավասարության գաղափարը: Բացի այդ, կարևոր է, որ դպրոցական անձնակազմը զգայուն լինի խնդրի հանդեպ, աչք չփակի և անտարբերության չմատնի:

5.Բուլինգի առաջացման պատճառները

Ժամանակակից զարգացող հասարակության մեջ, ցավոք, տեղ են գտել այնպիսի հատկանիշներ, ինչպիսիք են հոգևոր դատարկությունը, ցինիզմը, դաժանությունը, թշնամանքը: Այսօր շատ երեխաներ և դեռահասներ աչքի են ընկնում էմոցիոնալ անհավասարակշռությամբ և խոցելիությամբ, ինչպես նաև ագրեսիվ, գերզգայուն վարքագծով: Հոգևոր-բարոյական դաստիարակության խնդիրը երբեք չի կորցրել իր արդիականությունը: Հոգևոր-բարոյական դաստիարակության հիմքում ընկած է կյանքի նկատմամբ արժեհամակարգային վերաբերմունքի ձևավորումը: Նման դաստիարակության հիմքն է պարտքի, արդարության, պատասխանատվության և այլ հատկանիշների զգացումը, որոնք կարող են մեծ իմաստ և նշանակություն տալ մարդու արարքներին ու մտքերին: Անհրաժեշտ է վաղ մանկությունից ձգտել մարդու ներդաշնակ զարգացմանը, քանի որ հենց նման զարգացումն է հիմք հանդիսանում հասուն մարդու անձի, սերունդների աշխարհայացքի ձևավորման համար: Աշխարհայացք ասելով՝ հասկանում ենք աշխարհի հուզական ընկալման այն մասը, որի հիման վրա տեղի է ունենում մարդու բնավորության և գիտակցության ձևավորումը: Կատարելագործման արդյունքում մարդը ձեռք է բերում մտածելու, որոշումներ կայացնելու, իր արարքների և գործողությունների համար պատասխանատվություն կրելու կարողություն: Հետագայում տղամարդկանց մոտ ձևավորվում է տրամաբանական վերաբերմունք շրջապատող աշխարհի նկատմամբ, իսկ կանանց մոտ զարգանում է շրջապատող աշխարհը ինտուիտիվ և նուրբ զգալու ունակությունը :

Ներդաշնակ զարգացումը մեծապես որոշվում է դաստիարակչական խնդիրների հաջող լուծմամբ: Այդ խնդիրների շարքում առաջատար տեղ է հատկացվում հոգևոր և բարոյական դաստիարակության հարցերին, շեղված վարքագծի կանխարգելմանը: Շեղված վարքագիծը հասարակության կողմից ընդունված նորմերից և ստանդարտներից (իրավական, բարոյական, տարիքային, էթնիկ եւայլն) շեղվող վարքագիծն է :

Շեղված վարքագիծը և անձը, ով դրսևորում է այն, առաջացնում է բացասական գնահատական ուրիշների կողմից, որը կարող է հասարակական դատապարտման կամ սոցիալական պատժամիջոցների պատճառ դառնալ: Առաջին հերթին, պատժամիջոցները կատարում են անցանկալի վարքագիծը կանխելու գործառույթը:

Բայց, մյուս կողմից, դրանք կարող են հանգեցնել այնպիսի բացասական երևույթի, ինչպիսին է անձի պիտակավորումը: Ինչպես ցույց է տալիս հոգեբանամանկավարժական գրականության վերլուծությունը, «շեղված վարքագիծ» հասկացությունը հաճախ նույնացվում է «դեզադապտացիա» հասկացության հետ:

Աշակերտների դաստիարակության և ուսուցման հիմնական մանկավարժական մի շարք խնդիրների շարքում աշակերտի շեղված վարքագիծը կարող է ունենալ ինչպես դպրոցական, այնպես էլ սոցիալական դեզադապտացիայի բնույթ :

Երեխաների շեղված վարքագծի խնդիրը չափազանց սուր է մեր հասարակության մեջ: Ամեն տարի ավելանում է այն դպրոցականների թիվը, որոնք փորձում են խափանել դասերը, անպատշաճ վարքագիծ են դրսևորում ուսուցիչների և միմյանց հանդեպ : Այս մանկավարժահոգեբանական խնդրի սերմերը տեսանելի են դեռևս տարրական օղակի երեխաների վարքագծում:

Անշուշտ, խնդիրը շատ արդիական է, քանի որ հոգեբանական խնդրի հիման վրա ձևավորված վարքագիծը հետագայում ձևավորում է երեխաների անձնային հատկանիշներն ու որակները : Եթե աչք փակենք այս խնդրի վրա, ապա կրտսեր դպրոցական տարիքի երեխաների վարքագիծը տարիների ընթացքում, հատկապես դեռահասության տարիքում ավելի վտանգավոր վարքագծի դրսևորում կստանա:

Շեղված վարքագծի հիմնական դրսևորումներից մեկն է համարվում նվաստացումը /բուլինգը/: Բուլինգը անցանկալի, հոգեբանական, ֆիզիկական կամ էմոցիոնալ սահմանների խախտմամբ ագրեսիվ վարքն է դպրոցահասակ երեխաների շրջանում, որը ներառում է ուժերի իրական կամ ընկալվող անհամաչափություն, կրկնվող է կամ ունի կրկնման պոտենցիալ:

Դպրոցական բուլինգը ժամանակակից աշխարհում դիտվում է որպես սոցիալ-մանկավարժական լուրջ խնդիր: Ցավոք, 2018թ. Յունիսեֆի զեկույցը փաստում է, որ աշխարհում 13–15 տարեկան աշակերտների կեսը՝ 150 մլն. երեխա ասել է, որ դպրոցում կամ դպրոցի տարածքում հասակակիցների կողմից բռնության է ենթարկվել, 39 զարգացած երկրներում 10 աշակերտից 3-ն ասել է, որ բուլինգի է ենթարկել իր դասընկերոջը:

6.Բուլինգի հետևանքները

Բուլինգի հոգեբանական հետևանքները ներառում են դեպրեսիա, անհանգստություն, ցածր ինքնագնահատական, ինքնավնասող վարք, ալկոհոլի և թմրանյութերի օգտագործում և կախվածություն, ագրեսիա և բռնության կամ հանցագործության մեջ ներգրավվածություն: Թեև ահաբեկումը կարող է հանգեցնել ցանկացած երեխայի հոգեկան առողջության խնդիրների. Նրանք, ովքեր արդեն ունեն հոգեկան առողջության հետ կապված դժվարություններ, ավելի հավանական է, որ ենթարկվեն բռնության և զգան դրա բացասական հետևանքները:

Բուլինգի ենթարկվող երեխայի մոտ կարող են զարգանալ քնի խանգարումներ, գլխացավ, ստամոքսի ցավ, սրտի բաբախյուն, գլխապտույտ: Բուլինգը դեպրեսիայի և ինքնասպանության մասին մտածելու ռիսկի գործոն է: Երեխաները, ովքեր ահաբեկում են ուրիշներին, ենթարկվում են ահաբեկման կամ ահաբեկում են և ենթարկվում են բռնության, ավելի հավանական է, որ մտածեն ինքնասպանության մասին, քան նրանք, ովքեր ներգրավված չեն ահաբեկման մեջ[6]:

[6]https://www.stopbullying.gov/resourses/reserch-resourses/consequences-of-bullying

Բուլինգի բոլոր տեսակները հետապնդում են մեկ նպատակ՝ անձին պատճառել ցավ (հոգեկան կամ ֆիզիկական), տառապանք, անհանգստություն, դուրս բերել հավասարակշռությունից:

Դպրոցական բուլինգի հիմնական ձևերն են ֆիզիկական և հոգեբանական բռնությունները: Ֆիզիկական բռնությունը ենթադրում է ֆիզիկական ուժի կիրառում աշակերտի, համադասարանցու նկատմամբ: Ֆիզիկական բռնության ընթացքում կարող ենք կիրառվել հետևյալ ֆիզիկական գործողությունները՝ ծեծ, հարվածներ, ապտակներ, գույքի փչացում, զոհի անձնական իրերի՝ հագուստի, դասագրքերի հափշտակում: Ծայրահեղ դեպքերում կարող են կիրառվել կտրող-ծակող իրեր՝ դանակներ: Սովորաբար ֆիզիկական բռնությունները ուղեկցվում են էմոցիոնալ բռնություններով՝ ծաղրով և նվաստացուցիչ արտահայտություններով ու կատակներով, որոնք խորը ցավ են պատճառում զոհին: Հոգեբանական բռնությունը դիտավորությամբ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելն է՝ վախի զգացողություն առաջացնելով և գցելով արժանապատվությունը:

Կատարված հետազոտություններ և հետազոտությունների արդյունքներ

Հարցումների արդյունքներ

Հետազոտելով և ուսումնասիրելով «Բուլինգի դրսևորումները և կանխարգելումը դպրոցում» թեման, հարցումների ընթացքում խոսելով բուլինգի մասին, զրույցներ տանելով ուսուցիչների , աշակերտների հետ՝ բուլինգի ենթարկված երեխայի հետ կարող ենք աշխատել հետևյալ մեթոդներով: Բուլինգի կանխարգելման հարցում ուսուցիչներն ունեն իրենց մեծ ազդեցությունը: Ամեն ինչ պետք է սկսել կանխարգելումից:

Դպրոցում կարող ենք կազմակերպել բաց դասեր, իրազեկիչ հանդիպումներ, որոնց ընթացքում աշակերտները մանրամասն կծանոթանան երևույթին: Դասղեկի ժամերին կարող ենք պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին:

Աշակերտներին ներկայացնենք իրենց իրավունքները, միասին կարդանք այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները:

Երբ բուլինգ ենք նկատում մեր աշակերտների մոտ, լսենք երկու կողմին էլ, առանց նվաստացումների բուլերին բացատրենք, որ բուլինգը վատ երևույթ է: Նրանք բուլինգը նկարագրում են հետևյալ բառերով. ծաղր, վիրավորանք, նվաստացում, երեխաների իրավունքների խախտում, ճնշում գործադրել, խտրականություն, սեփական կամքը պարտադրել անհավասար վերաբերմունք, անտեսում, հահոյանք, անհարմար դրության մեջ դնել, ուժի դրսևորման միջոց, չշփվել, եսասիրության դրսևորում, վատ փոխհարաբերություններ, ինքնահաստատման միջոց և այլն:

Բուլինգի կանխարգելման հարցում անհամեմատելի է ծնողի դերը: Ծնողները պետք է պատրաստ լինեն երեխայի հետ երկխոսության, քննարկեն թե՛ լավ, թե՛ վատ արարքները:

Ծնողները պետք է երեխայի համար լինեն վստահելի, լավ ընկեր, խրախուսեն այն ժամանակ, երբ պատմում է իր խնդիրների մասին, սովորեցնեն խնդիրներն ինքնուրույն լուծել , բայց միևնույն ժամանակ ցույց տան իրենց աջակցությունը և միշտ հիշեցնեն, որ իրենց կողքին են: Սրանք բուլինգի կանխարգելման փոքրիկ միջոցներն են, որոնք շատ դեպքերում կարող են օգտակար լինել բուլինգի զոհերի

համար: Եվ մեկ կարևոր խորհուրդ բոլորին.մի՛լռեք, խոսե՛ք այս խնդրի մասին, ձեր լռությամբ խրախուսում եք խնդրի տարածմանը:

Իմ դիտարկումները

Ըստ իս, բուլինգի սահմանը հարաբերական է,և տարբեր հասարակություններում տարբեր երևույթներ ընկալվում են տարբեր կերպ: Այն ինչ մի հասարակությունում ո՛չ բռնություն, ո՛չ էլ բուլինգ չի համարվում, մեկ այլ հասարակությունում կարող է ընկալվել այդպիսին: Օրինակ, մի աշակերտի մոտ կեղծանունը կարող է վիրավորական հնչել, մեկ այլ անձի դուր գալ իրեն կեղծանվամբ դիմելը: Սա հատկապես վերաբերում է բանավոր բռնությանը: Բռնությունից խուսափելու և մարդասիրություն սովորեցնելու համար առաջին հերթին հարկավոր է լինել լավ օրինակ: Որպեսզի երեխան իրեն զգա գնահատված, պետք է նրան խրախուսել լավ արարքի համար: Պետք է մեծամիտ ու ինքնահավան չլինել, այլ ապրել այնպես, որ ուրիշները գնահատեն քո մեծությունը: Ուսուցիչը կարող է շատ նուրբ ձևով բարձրացնել ճնշված աշակերտի ինքնագնահատականն ու հեղինակությունը: Առողջ դասարանում է, որ կարելի է անցկացնել արդյունավետ դաս:

Ես իմ մանկավարժական փորձի ընթացքում բազմաթիվ իրավիճակների եմ հանդիպել, որտեղ նկատել եմ աշակերտների շերտավորում: Պարբեաբար ծաղրի ենթարկված աշակերտների մոտ զարգացել էր ինքնապաշտպանական ռեակցիան: Նրանց ծաղրում էին գիրության, մտավոր թույլ կարողությունների համար: Հաճախակի զրույցների ընթացքում այդպիսի աշակերտները սկսեցին ինտեգրվել և մասնակից դառնալ դասարանական միջոցառումներին:

Ամփոփում

Այսպիսով, կատարված հետազոտությունը թույլ տվեց բացահայտել, որ Հայաստանում գոյություն ունի բուլինգի բավականին լուրջ խնդիր, սակայն դրա մասին ընդունված չէ խոսել, այնպես, ինչպես ընտանեկան կամ սեռական բռնության կամ այլ խնդիրների մասին: Սակայն հայաստանյան իրականությունը հատուկ լուծումների կարիք ունի: Հասարակությունը կարծես քողարկում է բուլինգի դեպքերը: Բուլինգի խնդիրն ըստ էության բարձրաձայնվելու փոխարեն թաքցվում է և ներկայացվում որպես հայ հասարակությանը ոչ բնորոշ մի երևույթ: Այսպիսով, դպրոցական բուլինգի հիմնական պատճառը ծաղրողի հոգեկան խնդիրներն են: Ծաղրողը հաճախ կամքով թույլ մարդ է և իրեն բարձր է զգում միայն այն ժամանակ, երբ ծաղրում է մնացածին, երբ իր աշխարհում նա դառնում է բարձրագույնը: Հետևաբար այսպիսի մարդկանցից ոչ թե պետք է հեռու մնալ կամ, ինչպես անում են որոշ ուսուցիչներ, թևերը թափ տալ և ասել, որ այդ երեխան չի ուղղվի, այլ փորձել հասկանալ նրան, հասկանալ, թե ինչու է նրա մեջ այդ ցանկությունն առաջանում, և գոնե ջանալ այդ երեխային ճիշտ ուղու վրա դնել:

Մեր հասարակությունը ձգտում է խնդիրները ստվերում պահել այն պատճառաբանությամբ, որ եթե խնդիրը փակի տակ է, դադարում է տարածվել և գոյություն ունենալ: Սակայն պետք է հաշվի առնել մի կարևոր փաստ, որ երեխայի կյանքում եղած ցանկացած երևույթ, լինի դրական թե բացասական, մեծ ազդեցություն է թողնում նրա հետագա կյանքի որակի վրա: Եթե կան խնդիրներ, կգտնվեն դրանց լուծումները, պարզապես պետք է տեսնել, հասկանալ խնդիրը և լուծումներ գտնել: Բուլինգի խնդրի լուծումն ու կանխարգելումը պետք է գտնել երեխա-ծնող-ուսուցիչ ակտիվ համագործակցության շնորհիվ: Դպրոցում դասղեկի ժամերին պարբերաբար անդրադառնալ խնդրին, քննարկել երևույթը, խոսել դրա վատ ազդեցությունների մասին: Կարելի է աշակերտներին ներկայացնել իրենց իրավունքները, միասին կարդալ այն օրենքները, որոնցով պաշտպանվում են այդ իրավունքները: Կարելի է մշտապես կապ պահել դպրոցի հոգեբանի հետ, հանդիպել և քննարկել երեխայի պահվածքը: Շատ կարևոր է, որ ծնողներն ուշադրություն դարձնեն իրենց երեխաների ամենօրյա վարքին,այնպիսի մանրուքների, ինչպիսիք են, օրինակ՝ դպրոց գնալու

ցանկության բացակայությունը, նույն մարդուց շարունակական բողոքը, անտրամադիր կամ ընկճված լինելը: Եթե նման նախանշաններ կան, ապա մեծահասակները նախ պետք է երեխայի ներքին տագնապայնությունը նվազեցնեն շարունակական աշխատանքի միջոցով:

Այսպիսով, մենք հանգեցինք այն եզրակացությանը, որ «**Բռնությունն անմոռանալի դաս է, դաս, որ ոչ մի երեխա չպետք է սովորի»:**

Գրականության ցանկ

1. ՅՈՒՆԻՍԵՖ-ի կողմից (2018թ., ՆյուՅորք) դպրոցականբռնությանվերաբերյալզեկույցիամփոփտվյալները:
2. Նար-Դոս, Մեր թաղը, Եր. 1889 թ.
3. Վիքիպեդիա
4. Jam-news.net
5. https://www.aravot.am/2021/11/19/1230314/
6. https://www.stopbullying.gov/resourses/reserch-resourses/consequences-of-bullying
7. Դեն Օլվեուս https://www.reserchgate.net/publication/246876123Olweus_D_1993Bullying_at_school_What_we_know_and_what_we_can_do_Malden_MA_Blackwell_Publishing_140_pp_2500.

Հավելված

Դասի պլան

Ուսուցիչ՝Ն. Մարտիրոսյան

Առարկա՝Հայ գրականություն

Թեմա՝Հովհ. Թումանյանի,,Գիքորը,,պատմվածքը

Նպատակը՝1.ուսուցանել Թ-ի ,,Գիքորը,,,նրա սյուժեն,գաղափարը

Կահավորումը՝Թումանյանի նկարը,դասագիրք, պատմվածքը և նրան վերաբերող նկարներ

2.Գիքորի նախատիպը,նկարագրելԳիքորին

3.նկարագրել այն միջավայրը,որտեղ հայտնվեց Գիքորը

4.պատմվածքի կապը Ռաֆֆու և Շիրվանզադեի՝նույն սյուժեով գրված ստեղծագործությունների հետ

5.զարգացնել աշակերտների գիտելիքները, վերլուծելու և համեմատելու կարողությունները

Վերջնարդյունք՝1.պիտի կարողանա ներկայացնել պատմվածքի սյուժեն,գաղափարը

2.նկարագրի Գիքորին, նշի Գիքորի նախատիպը նրա ազգականներից մեկն է եղել

3.ներկայացնի քաղաքային միջավայրը, որում հայտնվեց Գրքորը

4.ցույց տա կապը և զուգահեռներ անցկացնի Շիրվանզադեի ,,Գործակատարի հիշատակարանից,,և Ռաֆֆու ,,Ոսկեա քաղաղը,, ստողծագործությունների միջև

5.պիտի կարողանա վերլուծել պատմվածքը և համեմատել կերպարները

Ընթացքը՝

1.հին նյութի հարցում

2.նոր նյութի հաղորդում-խթանման փուլում խոսել այն մասին, որ գրողի ստեղծագործությունը լավ հասկանալու համար պետք է լավ ուսումնասիրել նրա կենսագրությունը, որովհետև շատ փաստեր կարող են այդ դեպքում բացահայտվել, նշել

Թումանյանի, Ռաֆֆու և Շիրվանզադեի հերոսների ընդհանրությունները, համեմատություն կատարել հեղինակի և Գիքորի միջև;

Իմաստի ընկալման փուլում Թումանյանի դպրոցական տարիքի նամակները, հուշերը, համեմատել նամակների ոճը և Համբոյի գրած նամակի ոճը, խոսել ֆիլմի մասին և ամփոփել դասը հարցերով;

Կշռադատման փուլում նշել Թումանյանի և Գիքորի նմանությունը, պատմվածքի ավարտի համոզիչ լինելը;